

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 10.07.2012թ-ի նիստում քննության է առնվել «Հոկտեմբերյանի ֆերոսպլավ գործարան» ՍՊԸ 29.06.2012թ. դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 22.06.2012թ. թիվ 1206979 արձանագրության դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ արձանագրությունը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 31.05.2012թ. թիվ 1206979 հանձնարարագրի, «Հոկտեմբերյանի ֆերոսպլավ գործարան» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած դեբետային մնացորդի ուսումնասիրություն: Արդյունքում 22.06.2012թ-ին կազմվել է թիվ 1206979 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որով մասնավորապես արձանագրվել է հետևյալը.

«Հոկտեմբերյանի ֆերոսպլավ գործարան» ՍՊԸ կողմից ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով 01.01.2006-31.12.2008թթ ընկած ժամանակաշրջանի համար 30.05.2012թ. ՀՏ ներկայացրած դիմումով հաշվանցման և (կամ) վերադարձման ԱԱՀ-ի գումարը կազմում է 50.500.000 դրամ: Համաձայն Արմավիրի ՏՀՏ հետ կնքված փոխադարձ հաշվարկների ակտի, ընկերության ԱԱՀ-ի դեբետային մնացորդը 30.05.2012թ. դրությամբ կազմում է 65.127.591 դրամ:

Ներկայացված սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ 01.01.2006-31.12.2008թթ ընկած ժամանակաշրջանում ըստ ՏՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկների ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների իրացման շրջանառությունը կազմել է 670.966.600 դրամ: Ուսումնասիրության ընթացքում ընկերության կողմից չներկայացվեց «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ի 16-րդ կետի «ա» ենթակետով սահմանված «Բացթողումը թույլատրված է» և «Բեռը ստացված է» նշումներով մաքսային հայտարարագրերի առկայության մասին տեղեկանքը, ինչպես նաև ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների իրացման շրջանառությունը (այդ գործարքներով ապրանքների իրացման փաստը) հաստատող որևէ փաստաթուղթ: Համաձայն 01.01.2006թ-ից մինչև 31.12.2008թ. ընկած ժամանակաշրջանների համար ընկերության կողմից ՏՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկների, հաշվանցման (դեբետ) ենթակա ԱԱՀ-ի ընդհանուր գումարը կազմում է 62.851.800 դրամ: Ընկերության կողմից 2006թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներին, 2007թ. հունվար, ապրիլ, հուլիս և օգոստոս ամիսներին խախտվել է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջները, որի հետևանքով թվով 1 հարկային հաշվի վերաբերյալ ՏՀՏ տեղեկություն չի ներկայացվել, իսկ թվով 7 հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունը ներկայացվել է սխալ, որոնցում առանձին տողով նշված ԱԱՀ-ի գումարները կազմում են համապատասխանաբար՝ 2006թ. 2-րդ եռամսյակին 66.000 դրամ, 3-րդ եռամսյակին 150.0987 դրամ, 4-րդ եռամսյակին 151.685 դրամ, 2007թ. հունվարին 191.861 դրամ, ապրիլին 376.005 դրամ, հուլիսին 1.092.312 դրամ և օգոստոսին 1.604.322 դրամ, ընդամենը 3.733.172 դրամ: Նշված ԱԱՀ-ի գումարներն ընկերությունը ներառել է համապատասխան հաշվետու ժամանակաշրջանների ԱԱՀ-ի հաշվարկներում ցույց տրված հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների մեջ, խախտելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 43¹-րդ հոդվածի պահանջները: Համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 30¹-րդ հոդվածի նշված խախտումների արդյունքում հարկային պարտավորություններ չեն առաջադրվում:

Ելնելով վերոշարադրյալից, ուսումնասիրվող ժամանակաշրջանում դիմումով պահանջված 50.500.000 դրամ ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գումարը ենթակա չէ այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման:

«Հոկտեմբերյանի ֆերոսպլավ գործարան» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Ուսումնասիրությունը բացարձակ անհիմն է, այն չի բխում ինչպես մի շարք օրենքների և իրավական ակտերի պահանջներից, այնպես էլ ստուգող մարմինը թույլ է տվել «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի պահանջի կոպիտ խախտում

այն կտրվածքով, որ հենց հարկային մարմինն է պարտավոր աջակցել, օժանդակել տնտեսվարող սուբյեկտին, իսկ մեր դեպքում պատկերը բացարձակ այլ է: Այսպես.

« ՀԱ ՊԵԿ-ի առաջին տեղակալի կողմից 21.06.2012թ. տրված թիվ 7-1/6528-12 գրությամբ նշվում է, որ «Արտահանում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով 2006թ-ի ընթացքում լրացված բեռնամաքսային հայտարարագրերի պահպանման ժամկետն ավարտված է, այդ պատճառով չեն կարող տրամադրվել «Բացթողումը թույլատրված է» և «Բեռն ստացված է» նշումներով բեռնամաքսային հայտարարագրերի առկայության մասին տեղեկանք: Մինևույն ժամանակ, մեր կողմից վիճարկվող վարչական ակտում՝ արձանագրության մեջ նշված է, իբր մենք չենք տրամադրել համապատասխան հայտարարագրերի պատճենները և չենք ներկայացրել այդ գործարքներով ապրանքների իրացման փաստը հաստատող որևէ ապացույց, երբ իրականում, «ԱԱՀ-ի մասին» « օրենքի հավելված 1-ի 16-րդ կետի «ա» ենթակետով սահմանված «Բացթողումը թույլատրված է» և «Բեռն ստացված է» նշումներով մաքսային հայտարարագրերի առկայության մասին տեղեկանքը տրամադրվում է միայն «Արտահանում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով կատարված գործարքների մասով: Ընկերությունը ուսումնասիրվող ժամանակահատվածում «Արտահանում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով որևէ գործարք չի իրականացրել: Կազմակերպության բոլոր մաքսային գործառնությունները վերաբերվում են «ԱԱՀ-ի մասին» « օրենքի 16 հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ «ժամանակավոր ներմուծում վերամշակման համար» մաքսային ռեժիմով ներմուծված՝ «վերաարտահանում» մաքսային ռեժիմով արտահանվող ապրանքների հարկվող շրջանառությանը:

«ԱԱՀ-ի մասին» « օրենքի հավելված 1-ի 16-րդ կետի «դ» ենթակետի պահանջին համապատասխան ուսումնասիրություն կատարող պաշտոնատար անձանց տրամադրվել են ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներով ապրանքների իրացման /ծառայությունների մատուցման/ և ձեռք բերված /ներմուծված/ ապրանքների փաստը հավաստող պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը՝ Ապրանքների ներմուծման և արտահանման մաքսային հայտարարագրերը, բանկային հանձնարարագրերը, բանկի հաշվարկային հաշվից քաղվածքները, դրամարկղի ելքի օրդերները:

Արձանագրությունը չի համապատասխանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» « օրենքի 55-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի և 57-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին: Նույն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել 22 հունիսի 2012թ-ին կազմված թիվ 1206979 վարչական ակտը՝ արձանագրությունը:

« ՀԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ գանգատում բերված պնդումներն այն մասին, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում Ընկերությունը «Արտահանում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով որևէ գործարք չի իրականացրել, չեն համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, « ՀԱ ՊԵԿ տեղեկատվական տվյալների բազայում առկա տվյալների համաձայն, ընկերությունը 2006թ-ի ընթացքում 8 դեպքով իրականացրել է «Արտահանում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով գործարքներ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» « օրենքի հավելված 1-ով սահմանված «Ավելացված արժեքի հարկի հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարների մեծության որոշման կարգ»-ի (այսուհետ նաև Կարգ) 16-րդ կետի համաձայն. «ԱԱՀ-ի դեբետային մնացորդի հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարն արձանագրելու համար հարկ վճարողը համապատասխան հարկային մարմին (ուսումնասիրություն կամ ստուգում իրականացնող անձանց) է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

ա) «Արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների արտահանման գործարքների մասով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի կողմից հարկ վճարողին տրված տեղեկանքը՝ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով լրացված՝

<Բացթողումը թույլատրված է> և <Բեռը ստացված է> նշումներով մաքսային հայտարարագրի առկայության մասին>:

Կարգի 17-րդ կետի համաձայն. <Սույն կարգի 16-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացվում են հարկային մարմնի կողմից անցկացվող ուսումնասիրության կամ ստուգման ընթացքում, սակայն ոչ ուշ, քան հարկային մարմնի կողմից ուսումնասիրությունը կամ ստուգումը սկսելուն հաջորդող 5-րդ օրը, բացառությամբ այն դեպքի, երբ նշված կետով սահմանվել է փաստաթղթի ներկայացման այլ ժամկետ: Նշված ժամկետում փաստաթղթերի չներկայացումը հիմք է սույն կարգի 24-րդ կետի համաձայն ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման և ուսումնասիրության համար սույն կարգով սահմանված ժամկետների ընթացքը կասեցնելու կամ չներկայացված փաստաթղթերին վերաբերող՝ ԱԱՀ-ի գումարների հաշվին այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը և (կամ) այդ գումարների հետվերադարձը սույն կարգի 25-րդ կետի համաձայն մերժելու համար>:

Քննարկվող դեպքում ուսումնասիրության ընթացքում ընկերության կողմից չեն ներկայացվել <Բացթողումը թույլատրված է> և <Բեռը ստացված է> նշագրումներով մաքսային հայտարարագրերի առկայության մասին տեղեկանքը:

Բացի այդ, Հանձնաժողովին ներկայացվեցին Ընկերության և <Լաուդերդեյլ Լիմիթեդ> ու <Գլոուբ Պրոդակշնզ Լիմիթեդ> կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերը (այսուհետ՝ Պայմանագրեր), որոնց համաձայն Ընկերությունը (կատարող) պարտավորվել է վերագրյալ կազմակերպություններից (պատվիրատուներ) ընդունել համապատասխան հումքը, իրականացնել դրա վերամշակումը և վերամշակման արդյունքը փոխանցել պատվիրատուներին կամ նրանց կողմից նշված երրորդ անձանց: Պայմանագրերի 1.2 կետերի համաձայն, հումքի ու վերամշակված արդյունքի մատակարարման պայմանների, քանակի, որակի և այլ հատկանշների վերաբերյալ տվյալները կողմերը պետք է նշեին հավելվածներում և ընդունման-հանձնման ակտերում: Ընդ որում, Պայմանագրերի 1.2 կետերի համաձայն, կողմերի միջև պատշաճ ձևակերպված հավելվածները և ընդունման-հանձնման ակտերը հանդիսանում են Պայմանագրերի անբաժանելի մասը:

Քննարկվող դեպքում Պայմանագրերից բխող հավելվածներ կամ ընդունման-հանձնման ակտեր, որոնք ըստ էության կիմնավորեին ընկերության կողմից արտահանված արտադրանքը պատվիրատուներին տրամադրված լինելու հանգամանքը, առկա չեն:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Արձանագրությունը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ